ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի աշխատակազմի ենթակայության հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի աշխատակազմը հայտարարում է մրցույթ՝ «ՈԿՖ Բանավանի ԱԱՊԿ» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար.

Կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

1) բարձրագույն բժշկական կրթություն կամ առողջապահության կառավարում և կազմակերպում մասնագիտական կրթություն.
2) հանրային ծառայության առնվազն հինգ տարվա աշխատանքային ստաժ կամ առողջապահության բնագավառի առնվազն չորս տարվա աշխատանքային ստաժ:

Մրցույթը կանցկացվի 2025 թվականի հուլիսի 21-ին ժամը 11:00-ին:

Մրցույթին մասնակցելու համար քաղաքացիները Արարատի մարզպետի աշխատակազմ են ներկայացնում՝

1) դիմում.
2) մեկ լուսանկար 3 x 4 չափի.
3) աշխատանքային ստաժը հավաստող փաստաթուղթ.
4) ինքնակենսագրություն.
5) անձը հաստատող փաստաթղթի պատճենը.
6)բարձրագույն կրթության դիպլոմի (արական սեռի հավակնորդի դեպքում՝ նաև պարտադիր զինվորական ծառայության անցած լինելու հանգամանքը հավաստող կամ այլընտրանքային ծառայություն անցած լինելու կամ պարտադիր զինվորական ծառայությունից ազատված լինելու կամ տարկետման մեջ գտնվելու փաստը հավաստող փաստաթղթի) պատճենը.
7) տեղեկանք՝ դատվածության, դատվածությունը հանված կամ մարված լինելու վերաբերյալ (Արտաքին գործերի նախարարությունից).
8) տեղեկանք՝ սնանկության կամ դրա բացակայության վերաբերյալ (պետական եկամուտների կոմիտեից).
9) տեղեկանք՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հիվանդությունների բացակայության վերաբերյալ.(արտահիվանդանոցային պայմաններում բժշկական օգնություն և սպասարկում իրականցնող հաստատությունից, որտեղ համապատասխան կարգով կցագրված է դիմատուն).

10) հավակնորդի ցանկությամբ՝ հրատարակված գիտական հոդվածների ցանկը կամ գիտական կոչումը հավաստող փաստաթուղթ՝ դրանց առկայության դեպքում.

11) բնութագիր՝ վերջին աշխատավայրից (ըստ դիմումատուի ցանկության).

12)Կազմակերպության զարգացման և բարեփոխման հայեցակարգը (ներկայացվում է մրցույթի անցկացման օրվանից առնվազն երեք օր առաջ, ինչի վերաբերյալ կազմվում է հանձնման-ընդունման ակտ), որը ներառում է Կազմակերպության զարգացման և բարեփոխման, ինչպես նաև Կազմակերպության մասնագիտական, ֆինանսատնտեսական և կառավարման ոլորտի զարգացման հիմնական ուղենիշները, Կազմակերպության կառուցվածքի և գործունեության բարեփոխմանն ուղղված առաջարկությունները:

4.Հավակնորդը փաստաթղթերը ներկայացնում է առձեռն կամ առցանց (ararat.andznakazm@mta.gov.am)՝ բացառությամբ Կազմակերպության զարգացման և բարեփոխման հայցակարգի, որը ներկայացվում է առձեռն:

5. Առձեռն փաստաթղթերը ընդունվում են ամեն օր, բացի ոչ աշխատանքային օրերից:

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է 2025 թվականի հունիսի 20-ը:

Մրցույթը կկայանա Արարատի մարզպետի աշխատակազմի շենքում (ք.Արտաշատ, Օգոստոսի 23/60): Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները լրացուցիչ տեղեկությունների, ինչպես նաև հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել ՀՀ Արարատի մարզպետի աշխատակազմ (ք.Արտաշատ, Օգոստոսի 23/60, անձնակազմի կառավարման փաստաթղթաշրջանառության և հասարկայնության հետ կապերի վարչության անձնակազմի կառավարման բաժին, հեռ.0235 2-45-11):